

ՍՈՒՐԵՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ
բանասիրական գիտությունների դոկտոր, Պրոֆեսոր

**ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԱՐԺԷՔՆԵՐԸ՝
ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ**

Դժուարին, ողբերգական, բայց եւ երջանիկ ճակատագիր բաժին հասավ Աւետիս Ահարոնեանին. տրուեց քաղաքական թոհուբոհին՝ առաջնային իր գործունէութեան մէջ, նկատուեց, առաջնորդեց կուսակցութիւն, Ազգային Խորհրդարան, Վտարանդի կառավարութիւն, ժողովրդին, ղեկավարեց, դարձաւ պետական շինարարութեան առաջին կերտիչներից մէկը:

Սակայն յանդուգն ազգային երազ փայփայեց, որը գրաշխարհն էր: Գուցէ չէր սպասում, մտքով անգամ չանցաւ, որ այստեղ իր գրչի արդիւնաւորութիւնը կը կասեն, կասկածի տակ կ'առնեն: Պատճառը թերեւս իր գնացքն էր, ազատութեան, պայքարի ճանապարհով գրականութեան մէջ ընթանալու ընտրանքը, քաղաքական ուղենիշներով ինքն իրեն ժողովրդեան գրական տառապակոծ դաշտում հաստատելու ջիղը, որը չներեցին նրան ո՛չ բարեկամները, ո՛չ էլ հակառակորդները: Մե՛րթ կառչում էին «լակկանութեան» դրոյթներից՝ գրողի փեշերը քաշել-քաշքշելով մինչեւ Աբովեան, մե՛րթ էլ առանձնացնում նրա ստեղծագործական մարտնչող կոչնակները զուտ իբրեւ քաղաքական մենաշնորհ:

Մի ամբողջ համակարգ լծուեց Զապէլ Եսայեանի դիպուկ բնութագրմամբ՝ Թուխ Արամազդի դէմ՝ ծնկի բերելու նրա ստեղծագործական հատիկը, դուրս շարտելու նրա անունը գրական, անգամ ժողովրդի հաւաքական յիշողութեան աւազանից, լռեցնելու պայքարի ու «լռութեան» երգչին՝ ազգայնական ու թշնամական տարրերով հարստացնելով նրա բնութագրումների շարանը՝ ցոլակխանգաղեաններից մինչեւ աշոտօհանեաններ ու շատ ու շատ ուրիշներ: Եւ դա՛ մինչեւ այս դարասկիզբ:

Սա է եղել Աւ. Ահարոնեանի գրական ճանաչողական վեկտոր-ուղղութիւնը մեզանում գրեթէ հարիւր տարի: Ընդունենք, որ, հակառակ Յովհաննէս Աւագեանի, Յակոբ Օշականի, Մինաս Թեօլեօլեանի, Յակոբ Կարապենցի, Համաստեղի (նկատենք, որ բացառութեամբ Յ. Օշականի, թուարկածներս ներկայացնում են գրամշակութային ամերիկահայ թելը) եւ գլխաւորապէս եւրոպական ու մերձաւորարեւելեան Սփիւռքի մէջ նուիրական այլոց ջանքերի՝ արեւելահայ գրական մտքի աւանդական վեկտորը պահպանում է առաւելական

դիրքեր, ժխտումի ու արհամարհումի նոյն փորձառու նշորակով: Ընդ որում՝ շեշտում են նախ, գրական ուղղութեան հարցեր՝ սիմվոլիզմից մինչև ուղղափառ նատուրալիզմ տանող խաչուղիներ, ինչպէս նաև ժողովրդի կեանքի թշուառ քննութեան համապատկեր՝ որպէս թէ գեղարուեստական ընկալման այդ տեսակի մերժման կտրուկ կողմնորոշումով, որը, ընդունենք, թմբկահարում է յատուկ չարախնդութեամբ: Նոյնը վերաբերում է ազգային պայքարի հերոսական դրուագների ու փիլիսոփայութեան քարոզի համայնավարական գիտակից յայտնի անտեսումին, Արարատի ստորոտի ազգագրական աւանդոյթների հաւաք ու մանրակրկիտ ուսումնասիրութեան Աւ. Ահարոնեանի սուր հակուածութեանը կամ կուսակցական արժեքների ու հերոսական դէմքերի անվերապահ պաշտպանութեան օրինակներին, ուր ամէն պարագայի գեղարուեստական ու վաւերագիր փաստարկումները քով քովի են: Պէտք է, այնուհանդերձ, գնահատել Աւ. Ահարոնեանի ստեղծագործութիւնն ու դերը քաղաքական հակումներով մերժումի ելած ուժերի դէմ նոր ու նորագոյն գրականագիտական մտքի մշակած պաշտպանութիւնը, որը նորարարական է: Մեր օրերում դա բերել է խոշորագոյն արձակագրի արժեւորման անբեկանելի տեղաշարժ:

Հարցը սա է՝ Աւ. Ահարոնեանի 150 ամեակը ինչ-ինչ չափով ի վիճակի՞ է շրջելու տխրահռչակ ատելութեան եւ անտեսումի վայրիվերոյ պատմական ընթացքը: Մօտենո՞ւմ է արդեօք Աւ. Ահարոնեանի ճանաչողութեան նորոգութեան ժամանակը: Չէ՞ որ անհնար է վկայակոչել այդչափ անիրաւուած ուրիշ մի դէմք մեր գրական անդաստանում, որ քաղաքական հետապնդումի, անէծքի, չհաւասարակշռուած հաշուեյարդարի է ենթարկուել եւ դեռ, մենք էլ մեր հերթին հեզնենք գուցէ եւ մեզ, դեռ չի արժանացել «գրական համաներման»: Գուցէ դա նրանից է, որ գրական տարածքների բարձրադիր սահմանագլուխներին, անցեալ դարասկզբից ի վեր, Առաջին Հանրապետութեան շրջանից մինչև Խորհրդային եօթը տասնամեակների օտար գաղափարաբանութեան ամբողջատիրական ոլորքներում կանգնած են եղել աչալուրջ գրական ժամապահներ, որոնց շարքում նաև՝ Վահան Տէրեանը եւ Եղիշէ Չարենցը:

Սակայն անկարելի է չնկատել, որ ազգային-քաղաքական թոհուրոհի մէջ խրուած եւ 1916-ից այս կողմ եօթը տարի գրիչ չբռնած, ստեղծագործական ջիղը թուլացրած Աւետիս Ահարոնեանը շարունակում էր ներգործել գրական եւ ընկերային ընթացքների վրայ դարավերջի ու դարասկզբի հերոսական եւ յուզական պատկերների շնորհիւ: Բաֆֆուց յետոյ նա երկրորդ խոշոր դէմքն էր, որ պահում էր նման տիրական ազդեցութիւն՝ յատկապէս արեւմտահայ գրամշակութային դաշտի վրայ:

Ցաւօք, նրա նկատմամբ ժխտական յայտնի կատաղի դիրքորոշումները գալիս էին արեւելահայ ձախակողմեան, յարաճուն ուղղութիւնից՝ ընկերվարական-համայնավար թելադրութեամբ, քաղաքական ու մշակութային հայեացքի մեկուսի սրութիւնից, որը անցեալ դարի տասական թուականներից ի վեր ծառայած էր ազգային մտածողութեան եւ ազգային քաղաքական երազանքի դէմ, մտայնութիւն, որ առ նուազն մինչեւ յիսնական թթ. կէսերը, մինչեւ հալոցքի յայտնի շրջան, տիրապետող գաղափարաբանութիւն էր, որի կառքին լծուած էին գրեթէ բոլորը, այդ թւում՝ նաեւ նուիրական անուններ. այլ կերպ չէին էլ կարող:

Մասնատրապէս Աւ. Ահարոնեանի դէմ ծառայաւ անգիղջ ու այլամերժ մի ողջ համակարգ, որը հեղեղի պէս վրայ տալով՝ չխրտնեց ստորակարգ պայքարի ու անդուլ մերժումի եղանակներից: Արձակագրի ու քաղաքական գործչի լայն ու հզօր թափը, երազի ու պայքարի բեւեռների յաջորդական հակոտնեաները նրա գրականութեանը հաղորդել էին ազգային յեղափոխական, զգացմունքային, ռոմանտիկական սուր որակներ, ազատերգութեան առարկայական կոչնակներ, որը հաշտութեան եզրեր չէր թողնելու մաքառումի գուպարի մէջ յայտնուած ուժերի միջեւ:

Դեռ դարասկզբի գրական անդաստանում թուրքահայ պատկերներին զուգընթաց նրա հնչեցրած ազգային անդուլ պայքարի թեման ժամանակակիցները ըստ էութեան դիտեցին Բաֆֆու գաղափարաբանութեան շարունակութիւն, ինչը, գրականագէտ Մինաս Թէօլեօլեանի վկայութեամբ, խորութեամբ գիտակցում էր ինքը հեղինակը. «Միակ աթոռի մը ցանկութիւնը ունեցած եմ կեանքիս մէջ՝ Բաֆֆիի աթոռ»¹: Նրան այդպէս ընդունողների մէջ առաջիններից մէկը Ղազարոս Աղայեանն էր, բայց սհա սուր քննադատողներից Լեօն «Ռուսահայոց գրականութեան» մէջ, յենուելով Աւ. Ահարոնեանի՝ 80-90-ական թթ. գրական արտադրանքի վրայ, շրջանցում էր «մարտական շեշտերի» առկայութիւնը՝ ուշադրութիւնը բեւեռելով թշուառութեան յուզախառն բնութագրումներին. «Մեր լալկանութիւնը, մեր պատմական լալկանութիւնը, արտասուքը, ողբը մեր հին անցեալի մէջ եղել են տաղանդ, գեղարուեստական ճաշակ ցոյց տալու ասպարեզներ... Լալկան էր Աբովեանը... Եթէ գրական նախատիպ (մեր կարծիքով՝ Լեոյի բառի ընտրութիւնը սխալ է՝ պիտի լիէր գոնէ՝ «նախօրինակ» - Ս.Դ.) որոնելու լինենք Ահարոնեանի համար, միայն Խաչատուր Աբովեանը պիտի գտնենք... Լալկանութիւնը Ահարոնեանին էլ երկարաբան է դարձնում, սիրում է նա պտոյտներ անել վշտի շուրջը...»²: Միայն «Սրբկի սուրբը» վէպի վերլուծութիւնը նրան բերում է վրիպած տեսակէտի հապճեպ ամրագրման, թէ՛ «...գունատ ու խեղճ է Ահարոնեանի

¹ Մ. Թէօլեօլեան, Դար մը գրականութիւն, հ. Ա, Պոսթըն, 1977, էջ 673:
² Լեօ, Երկերի ժողովածու 10 հատորով, հ. 9, Եր., «Խորհրդային գրող», 1989, էջ 701:

ներկայացրած քաջութիւնը»³: Այնուհանդերձ Լէօն ընդունում է մտերիմ ընկերոջ տաղանդը. «Եւրոպան,- գրում է նա նոյն աշխատութեան մէջ,- չաղճատեց նրա բնածին ինքնուրոյնութիւնը: Նա չբաժանուեց իր խեղճերից... չգրաւուեց մոդային հոսանքներով, այլ հաւատարիմ մնաց իր անհատականութեան, եւ նրա վրայ ազդողները, նրան ոգեւորողները Վիկտոր Հիւկոյի նման հեղինակներն էին»⁴:

Անակնկալ էր, որ Լէօն «ինքնուրոյն անհատականութեան տեսակէտից» Աւ. Ահարոնեանի «Մրրկի սուրբը» միաժամանակ դասում էր երբեւէ ստեղծուած հայ լաւագոյն վէպերի շարքը՝ ընդգծելով, թէ՛ «Իբրեւ գեղարուեստական գրութիւն նա բարձր արժանաւորութիւններ ունի, այստեղ հեղինակը գրչի վարպետ է եւ նկարագրական այնպիսի գոհարներ է տուել, որոնք մեր նորագոյն, ընդհանրապէս գունատ եւ անոճ գրականութեան զարդերը պիտի կազմեն»⁵: Զարմանալին այստեղ Լէոյի վերաբերմունքի երկակիութիւնն է, գրողին երկրորդ չափումով մօտենալու արուեստական պահանջը, ինչը Աւ. Ահարոնեանի հարցում ակամայ դրական դեր է խաղում:

Աւելորդ չէ ընդգծել, որ Աւ. Ահարոնեանի՝ զգացական, բայց ազգային ոգու յայտնատեսութեամբ խորացած արձակը նպաստում էր երկրի աշխարհագրական-բարոյաբանական նկարագրի բոլորագծման եւ պաշտպանութեան գերխնդրին, որը դարձաւ սփիւռքահայ գրականութեան հիմնահարցերից մէկը ոչ միայն Կարօտի մեկնաբանութիւններում, այլեւ պատմական-սագրական ուղղութեան երկերում (Մմբատ Փանոսեան, Արամ Հայկազ, Յակոբ Ասատուրեան, մի որոշ չափով՝ Կարօ Սասունի, Սիմոն Սիմոնեան եւ ուրիշներ): Այդ ազդեցութիւնն զգալի էր ե՛ւ ռոմանտիկ յաճումներում, ե՛ւ ճակատագրի զանգուածային դեգերումներում, որոնց օգնութեան էր գալիս Աւ. Ահարոնեանի ճանաչողական խոր գրիչը: Պատահակա՞ն համարել Վ. Շուշանեանի ակնյայտ դժգոհութիւնը մէկ այլ արեւելահայ գործչի՝ Սիմոն Վրացեանի յօդուածաշարի առիթով 1928 թ. Յուլիսի 17-ին հենց նրան ուղղուած նամակում. «Ձեր յօդուածաշարքը կարդացի: Ինչո՞ւ այդքան անարդար էք ընկ. Ահարոնեանի հանդէպ: Իր վերջին գործերը՝ «Ճամբորդը», «Իմ գիրքը» եւ այլն անհամեմատ լաւ են առաջիններէն, շատ աւելի լաւ: Որքան ալ ժամանակը գտէ ու հինգնէ իր գործը՝ այսուհանդերձ էջեր ունի, որոնք բացառիկ գեղեցկութիւն մը ունին («Արիւնտ թթխմորը», «Խայ»ը եւ այլն): Ժամանակը կու տար արդէն այդ հարուածները, որ Դուք այնքան անզթութեամբ շոռայլած էիք Ձեր գլուխին:

³ Նոյն տեղում, էջ 705:

⁴ Նոյն տեղում, էջ 703:

⁵ Նոյն տեղում, էջ 706:

Կը ներէք, որ Ձեր հանգիստը խանգարեցի»⁶:

Յիրաւի, Աւ. Ահարոնեանն առաւել սիրում ու գնահատում էր նախեւառաջ արեւմտահայութեան շրջանում, իսկ սկզբնաւորումը գալիս էր Քրիստափոր Միքայէլեանի վստահագիր յորդորից, ծաւալում նորերի մէջ, ինչը դիպուկ մեկնաբանում է Աբրահամ Ալիքեանը ⁷, մինչդեռ արեւելահայերի մօտ խորն էին անբաւարարութեան շերտերը:

Այսպէս, արձակագրի «լակնութեան» բացասման մտայնութեան շնչով վարակուեցին նրանք, ովքեր ժողովրդի քաղաքական փրկութիւնը տեսնում էին ռուսական յեղափոխութիւնների յորձանուտում: Եւ այս դիրքերից էլ իբրեւ թէ «պսակագերծում էին» Աւ. Ահարոնեանի գեղարուեստական հայեացքի քաղաքական հիմերը: Վ. Տէրեանը, նախապէս չհանդուրժելով Աւ. Ահարոնեանի եւ Վրթ. Փափագեանի՝ «մեր օրերի հեղինակներ» դառնալու յաւակնութիւնը, ըստ էութեան՝ ժխտում էր ազգային քաղաքական պայքարի շեփորման ուղին, որը որպէս թէ նրանք, գլխաւորապէս Աւ. Ահարոնեանը, միախառնեցին դասակարգային պայքարին՝ Տէրեանի ըմբռնումով «ներկայի հզօրաբար առաջխաղացող բանուորական իդէալների հետ»⁸:

Աւ. Ահարոնեանից աւելի վաղ հանդէս գալով՝ Վրթ. Փափագեանը յուսադրում էր գրական հասարակութեանը, թէ ինքը շարունակում է այնտեղից, որտեղ կանգնել էր Բաֆֆին: Այս պարագան հիմք է դարձել այն ենթադրութեան, թէ «...յիրաւի, Բաֆֆուց յետոյ ոչ մի գրող իր ստեղծագործութիւններում տարածական այնպիսի լայն սահմանների մէջ չընդգրկեց հայկական իրականութիւնը, ինչպէս Վրթ. Փափագեանը» ⁹:

Գրապատմական դերերի «վերաբաշխման» փորձերը առանձին եռանդով էր կատարում Վ. Տէրեանը՝ անարդիւնաւէտ համարելով ընդհանրապէս, ինչպէս ինքն էր ասում, Բաֆֆու «Կայծեր»ում արծարծած գաղափարների իրականացումը Աւ. Ահարոնեանի, Վրթ. Փափագեանի նման գրողների միջոցով, որոնք, իբր միաւորելով սոցիալական ու ազգային

⁶ Վ. Շուշանեան, Նամակ Սիմոն Վրացեանին, «Ազատամարտ» /շաբաթաթերթ, Եր., 1994, թիւ 11 (154), 18-24 Մարտի, էջ 15:

⁷ Դրա ամենաթարմ օրինակը թերեւս գնահատութիւնն է 1992 թ., երբ Անթիլիաս անցնելուց յետոյ Աբրահամ Ալիքեանը գրում է Աւ. Ահարոնեանի «Իմ գիրքը» յուշագրութեան առաջաբանը Անթիլիասի պատուէրով: «Կայ ահարոնեանական կոչուող հմայք մը, որ, ըստ իս,- նկատում է նա,- մանաւանդ արուեստի ու լեզուի իմաստով կու գայ ոչ այնքան արեւելահայ թէկուզ լաւագոյն արձակի եւ բանաստեղծութեան աւանդներէն, որքան Թուխ Արամազդի տարիներ, տարիներ՝ շարունակ ունեցած սերտագոյն շփումէն ու հպումէն արեւմտահայ մշակոյթին եւ արեւմտահայերէնին» (Ա. Ալիքեան, Հանդիպակաց ասիեր / յօդուածներ, էսսէներ, հարցազրոյցներ, Եր., «Մարգիս Խաչենց», 2009, էջ 351):

⁸ Վ. Տէրեան, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 3, Եր., Հայպետհրատ, 1975, էջ 51:

⁹ «Հայ նոր գրականութեան պատմութիւն», հ. 4, Եր., ԳԱԱ հրատ., 1972, էջ 75:

պայքարների ծայրակէտերը, «յետոյ թողին Ռուսիան ու անցան այն խաւար ու մութ երկիրը, որ Տաճկահայաստան է կոչուում...»¹⁰:

Կտրուկ ու առ նուազն տարօրինակ է Վ. Տէրեանի դիրքորոշումը. Աւ. Ահարոնեանը՝ քնարաշունչ արձակագիրը, քնարերգու բանաստեղծի գաղափարական-քաղաքական հակառակորդն է, որի գրական գոյատեւութիւնն արդէն անախրոնիզմ է թւում իրեն: Այստեղից՝ բանաստեղծի անցումը գրական «հաշուեյարդարին»՝ զուտ արեւելահայ ըմբռնումով. «Ահարոնեանին չօգնեց սիմբոլիզմի տեղ ընդունած նրա պլեգորիզմը, յայտարարում է նա եւ քիչ անց փորձում հաստատել,- չօգնեց, որովհետեւ ամբողջ մտածողութիւնն ու զգացողութիւնը մնում էին հինը, աւանդականը: Տարօրինակ բան չկայ այստեղ: Ըստ էութեան՝ դա կեանքի մշտական եւ ուղիղ ճանապարհն է, քանի որ հինը պիտի մեռնի, աւանդականը պիտի տեղ տայ նորին – այդպէս է ամէն տեղ, իսկ եթէ դա հիւանդոտ բնոյթ է ստանում եւ արտայայտութիւն մեզանում, դա էլ հասկանալի կը լինի, եթէ աչքի առաջ ունենանք մեր ամբողջ կեանքի հիւանդագին բնոյթը»¹¹:

Յուլակ Խանզադեանին յղած նամակում Աւ. Ահարոնեանի «Մայրեր»ի առթիւ Վ. Տէրեանը գրում է. «Ահարոնեանի բողոքները ոչ միայն գռեհիկ են, մեծամիտ «գերազանցօրէն», այլեւ զուտ տիրացուական»¹², - սա դեռ սկիզբն է: Նոյն նամակում, նոյն էջի վրայ, Վ. Տէրեանի, մեղմ ասած, անկրթութիւնը ցայտում է բառից բառ՝ լաւագոյնս երեւան հանելով հոգու մաղձը, եթէ կարելի է այսպէս ասել. «Մեծամիտ է (Աւ. Ահարոնեանը – Ս.Գ.), որովհետեւ նա *իրօք* ենթադրում է, թէ իր յիմար գրուածքը (որ նրա գրուածները յիմար են, փառք Աստծոյ, եւ քանի՛ տարի է՝ պնդում եմ) մտել է ժողովածուի մէջ ոչ թէ նրա համար, որ նա մի գրական շեղելի է, այլ նրա համար, որ նա նմուշ է մեր դոչիների ստեղծած վայրենի «շախսէական» գրականութեան»¹³ (ընդգծումը հեղինակինն է – Ս.Գ.): Աւելին՝ Վ. Տէրեանն ընդհանրացման անընդունելի խաղի է գնում, իրեն էլ, առանց խորամուխ լինելու, ըստ էութեան, դնելով, իր գտած բառով, ոչ դելիկատ վիճակում: Ըստ նրա՝ Աւ. Ահարոնեանը լրացնում է շարքը «...այն դոչիների, որոնք դժբախտաբար մեր կեանքում խոշոր դեր են կատարում, ուրեմն նրանց գրականութիւնը, որքան եւ յիմար, գռեհիկ, անիմաստ լինի, չէր կարող տեղ չբռնել մեր ժողովածուի մէջ, ուր աշխատել ենք ոչ թէ զուտ գեղարուեստական եւ մեր ճաշակի համապատասխան բաներ տալ, այլ տալ այս կամ այն տեսակէտով բնորոշ գրուածներ, բայց

¹⁰ Վ. Տէրեան, նշ. աշխ., էջ 51:

¹¹ Նոյն տեղում:

¹² Նոյն տեղում, էջ 437:

¹³ Նոյն տեղում:

բնորոշ կարող է լինել եւ ամենագուելի գրուածքը, այնպէս չէ՞»¹⁴: Անհասկանալի անսկզբունքայնութեան, կոյր ատելութեան բացառիկ օրինակ է սա ազգային-քաղաքական ուժի հանդէպ, որը տարածուում է նաեւ նրա մշակութային ճակատը ապահովող դէմքերի վրայ՝ Դանիէլ Վարուժան, Սիամանթօ, «հեթանոսական» գրական շարժում եւ ուրիշներ, այդ թւում՝ Աւ. Ահարոնեան:

Վ. Տէրեանին կարելի է հակադրուել իր իսկ սահմանած «խաղի» կանոնով. հին տիկերը նոր գինիով համալրելու կարիք չկայ. հին գինին միշտ էլ յարգի է, այնպէս, ինչպէս գիտական բարեխիղճ ուշադրութեան այսօր արժանի է Աւ. Ահարոնեանի գրականութիւնը: Բայց Վ. Տէրեանի ենթակայական քայլը կարելի է հասկանալ եւ բացատրել, միայն թէ արդարացնելը անելի դժուար է թւում: Վ. Տէրեանի՝ Նուարդ Թումանեանին գրած յայտնի նամակից 11 տարի առաջ, «Լոռիին» վէպի մէջ Աւ. Ահարոնեանը առաջ էր քաշել Վ. Տէրեանի մէջ ենթագիտակցական ազդեցութեան հրաշալի նախառիթ. սիրոյ ենթահողի վրայ ընթերցողին հոգեաշխարհով բացուող նկարիչը նոյն հարթութեան վրայ է, ինչ սքանչելի մեր բանաստեղծը հայրենասիրութեան անանձնական դիրքորոշման մէջ, որի ծալքերը մեկնում է ներանձնական չկրկնուած, իրականում՝ ահարոնեանական չափաբերականով: Աւ. Ահարոնեանի մօտ՝ «Չգիտեմ, անուանացէ՛ք երեխայութիւն, յիմարութիւն, թեթեւամտութիւն, բայց ես սիրում եմ իւենթի պէս... Գիտակցութիւն չկայ, բանականութիւնս չի գործում, սիրոսս է միայն, որ լռութեան միջից մխում է... Սա մի տանջանք է եւ գերագոյն հաճոյք միաժամանակ, բայց շարունակել չեմ կարող, իմ էութիւնը փշրում է, ես մեռնում եմ կամաց կամաց, ահա թէ ինչու ես աշխատում եմ փախչել ձեզանից, թէեւ, գիտեմ, երբեք կամ շատ երկար բուժուելու չեմ այս վերքից»¹⁵:

Բերենք համանման հատուած Վ. Տէրեանի նամակից՝ առանց առարկայական մեկնաբանութեան. «Այնքա՛ն ջերմ բաղձանք կայ իմ մէջ... կը ցանկանայի գոնէ սուտով ոգեւորել ինքս ինձ, միայն թէ ազատուէի այդ թախծալի մտածմունքներից ու տարակուսութիւններից: Վերջ ի վերջոյ, ես սկսում եմ գալ այն եզրակացութեան, որ մեր հայրենիքի ցաւը մեզ այնպէս է մաշում, ջլատում, կեղեքում, որ մենք դառնում ենք անընդունակ ուրիշ բան հասկանալու կամ անելու: Դա մի հիւանդագին սէր է, դա մի անյաղթելի մոլութիւն է – դրա պրիզմայով է բացուում մեր առջեւ աշխարհը – այդ չափով ենք մօտենում մենք ամէն ինչի եւ գուցէ դրա համար անզօր ենք դառնում ու մեռնում ենք վաղ»¹⁶:

¹⁴ Նոյն տեղում:

¹⁵ Աւ. Ահարոնեան, Ժողովածու երկերի, հատոր վեցերորդ, Բոսթըն, 1948, էջ 50:

¹⁶ Վ. Տէրեան, Երկերի ժողովածու երեք հատորով, հ. 3, Եր., 1963, էջ 360:

Իսկ սա նշանակում է՝ արձակագրի բարերար ներգործություն, որը նախանձի պատին դեմ գալով՝ Վ. Տերեանի մօտ վերաճում է անըմբռնելի զայրոյթի, անդոհանքի:

Նորից դիմելով Տերեանի, այս անգամ՝ «Երկիր Նաիրի»ի բանաստեղծական սքանչելի շարքին, արձանագրենք այն, ինչն իր զգացական սրտով արդեն անցել է, ինչի մեջ ինքը փորձ էր անում մեղադրական կարդալ Աւ. Ահարոնեանին: Ի՞նչ է, այս պարագային «լավկանութի՞ւն» է հայրենիքի վաղուայ օրուայ հանդէպ ունեցած ազնիւ տազնապը: «Որպէս Լաերտի որդին...» սկսուածքով քերթուածքն արդեօք չի՞ աւարտում «ահարոնեանական» կշռոյթով՝

Ու կարօտակէզ ահա կրկին
Վերադառնում եմ, որ առյաւէտ
Ունկնդիր լինեմ քո հին երգին
Եւ լամ, լամ անուշ քո երգի հետ...¹⁷:

Եւ մի՞ թէ ինքը՝ Վ. Տերեանը, 1915-ին նոյն շարքի «Այնպէս անխինդ են եւ նման լացին...» ծրագրային երգում Աւ. Ահարոնեանի հանգոյն չէր խոստովանում՝

...Մեզ չի հասկանայ օտարերկրացին
Մեզ չի հասկանայ սառն օտարուհին...¹⁸:

Այսինքն՝ մեր բանաստեղծական ասանդոյթի «ելեւէջները» «մելամաղձիկ» են, աւելին՝ «լացող, միալար», «ներդաշնակ այնպէս / Եւ հարագատ են սրտին մեր մոլար, / Հոգուն մեր բեկուած, աւերուած, հրկէզ...», ասել է թէ՛ տէրեանա-ահարոնեանական ոճաւորում, որ տիրապետում է հայ գրականութեան մէջ:

Աւ. Ահարոնեանի նկատմամբ անարդար գնահատութիւնների մէջ առաջնութեան դափնին, թում է, իսկխում են Վ. Տերեանն ու Ե. Չարենցը: Վառ օրինակը վերջինս, որքան էլ տարօրինակ է, տալիս է իր լաւագոյն՝ «Մահուան տեսիլ» պօէմում (1933), ուր արեւմտահայ բանաստեղծական փաղանգի կողքին բերում է արեւելահայ Աւ. Ահարոնեանին, որի կերպարում քաղաքական բնութագիրը գերիշխում է գրական-գեղարուեստական ներկայակնի որակների վրայ: Քիչ է ասել՝ անարդար է. հայիոյախառն է, քաղաքական

¹⁷ Նոյնը, Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 3, էջ 239:

¹⁸ Նոյն տեղում, էջ 240:

դիրքերից սպանիչ ու ոչնչացնող Ե. Չարենցի վերաբերմունքը: Մերկ նստուկը «...բարձրանում, իջնում է ներքեւ / Փողային գործիք նուագող վարպետի այտերի նման», նա քաղաքական եւ գրական դաշտում «...արշաւում է... տախտակէ ձողերից շինած մի նժոյգի» վրայ, այսինքն՝ արարքը համահասար է տրոյական ձիու յայտնի պատմութեանը: Իսկ նրա ե՞րգը: Պատասխանը հնչում է գրեթէ տերեւանական ժխտումի յայտնի եռանդով.

Իր խրոխտ դէմքին հակառակ, հակառակ առնական տեսքին՝
Երգում էր կերկերուն ձայնով նա քաղցրիկ, լորձունքոտ երգեր...¹⁹:

Ե. Չարենցը ելնում է քաղաքական պայքարի ապարդիւնութիւնից, բնականաբար, Հ.Յ.Ղազնակցութեան առաջնորդների վարքագծից՝ յիշատակելով անուններ եւ հանրայայտ պատմական դէպքեր: Պատահական չէ, որ այդ կուսակցութեան դրօշը «սեւ» պիտի լինի, ինչը գոյն չէ, այլ արդէն բնութագիր խորհրդային գաղափարական մեկնութեան տեսակէտից: Եւ Ե. Չարենցի գեղարուեստական յօրինումի համաձայն՝ «նրանց» քաղաքական առաջնորդն է դա որպէս թէ «խոստովանելու»՝ «Եւ մեր սեւ դրօշի վրայ գրեցի «Հայրենիք կամ մահ»²⁰:

Նրանց քննադատական մոլուցքը «ազգայնականութեան» թիրախն էր, որը Ե. Չարենցը, օրինակ, չէր էլ թաքցնում: «Մերի դաշնագրից մինչեւ հայ կանանց ալեծուփ մազերը եւ հեթանոս մարմինը» կամ ընդհակառակը՝ երգիծական յախուռն յօդուածում խօսքն ուղղում էր Աւ. Ահարոնեանին ու անցնում «հեթանոսական» գրական շարժման դատափետմանը՝ ճիշդ եւ ճիշդ Վ. Տէրեանի նման. «Ռուսահայ այս վարժապետ ինտելիգենտի (Աւ. Ահարոնեանի – Ս.Դ.) արնակից եղբայրը (Դ. Վարուժանը – Ս.Դ.) Պոլսում այն ժամանակ հրատարակում էր «Նաւասարդը», որի ղեկավարները, նայիրեան վարժապետազգեստ քուրմեր ու ասպետներ, գրչի մի մոզական շարժումով վերադարձնել էին ձգտում «հեթանոսական ժամանակները», այսինքն՝ ճորտատիրական կարգերում փթթած ցոփութիւնը, շուայտութիւնը եւ այլասերուած հաճոյքը... Եւ կարծում էին, թէ նախակարապետներն են հայկական նոր Ոսկեդարի, նորագոյն Ռենեսանսի»²¹:

Մի փոքր ուշ գաղափարական մոլորութեան դիրքերից խորհրդահայ բանաստեղծը Դ. Վարուժանի եւ շարժման մասին տալիս էր քաղաքական սխալ ու խորքի մէջ անընդունելի բանաձեւեր. «Իրօք որ «հեթանոսական» վակիսանալիա էր, որ ապրում էր հայ ազգայնական

¹⁹ Ե. Չարենց, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 4, Եր., ԳԱ հրատ., 1968, էջ 253:

²⁰ Նոյն տեղում, էջ 237:

²¹ Նոյնը, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Եր., ԳԱ հրատ., 1967, էջ 156:

մտաւորականութիւնն այդ օրերին: Այդ մտաւորականութեան քաղաքական կազմակերպութիւնը՝ «Հայ մարտական կուսակցութիւնը», ճիշդ որ «հեթանոսական» անփութութեամբ ասպետական ֆրազի հրթիռներ էր վառում... պայթուցիկ նիւթերի շուրջը»²²:

Հետեւութիւնը մէկն է. եթէ Լեւոյի մօտ Ահարոնեանից, ինչպէս Թումանեանն է յիշում, «միշտ իրար հետ ու իրար մօտ»²³ մտերիմներից, դժգոհութիւնը առժամայ է, զուտ գրական տպաւորապաշտ, նկատենք՝ ազնիւ շեշտադրութեամբ, եթէ Վրթ. Փափազեանի մօտ սրուած է Րաֆֆու ուղղակի ժառանգորդը լինելու յաւակնութիւնը, ապա Վ. Տերեանի, Ե. Չարենցի ու նրանց արբանեակների շրջանում գերիշխում է քաղաքական անհանդուրժողականութիւնը, որին, յատկապէս Չարենցի պարագային, աւելացել է անձնական դրդապատճառներով պայմանաւորուած ատելութիւնը: Այսինքն՝ խորապէս ենթակայական մօտեցումը:

Արեւելահայերի շրջանում թերեւս հաճելի բացառութիւնը Գարեգին Նժդեհն էր, որն ազատութեան երգչի ստեղծագործութիւններում ոգեշունչ հռետորական ոճով առանձնացնում էր հայ քաջորդիների «ցեղային շարժը», հակադրում ասպարէզ նետուած «լալկանութեան» միտումի շարունակական շեփոքումներին: Գուցէ չափազանցութեամբ է նա գնահատում Ա. Ահարոնեանին, բայց չափազանցութիւնը որոշակի տրամաբանութեան հետեւանք է. «Անցողականից դէպի Յաւիտենականը տանող ճամբի վրայ՝ Ահարոնեանը հանդիպեց իր Յեղի Ոգուն եւ նրա հետ իջաւ Արցունքի հովիտը, ուր նա ներքին հաղորդակցութեամբ իր ճակատագիրը կապեց Հայութեան ճակատագրին եւ սիրեց զայն մի նոր ու մեծ սիրով...»:

Ու այնուհետեւ հայ Մտածումի ու Զգացումի բոլոր ճամբաների վրայ նրան ա-ռաջնորդեց Յեղի Ոգին:

...Նա դարձաւ Հայութեան Ֆիխտէն²⁴, որպէսզի հրեղէն խօսքով իր ժողովրդի սիրտը վառէ ու սրբէ: Յեղը կռուի էր բռնուած մահուան հետ, եւ Ահարոնեանը մի նոր հոգեւոր ակորդ մտցրեց մեր կեանքի մէջ – սեր դէպ տիտանականը՝ պայքարի ու զոհաբերութեան մէջ: Ժողովուրդը կը պատրաստուէր նոր ճակատագիր կռել իրեն համար, եւ Ահարոնեանը չուշացաւ հայ հոգեբանութեան պատուաստել հիացումը պայքարի ու քաղցրութիւնը

²² Նոյն տեղում, էջ 157:

²³ Յովհ. Թումանեան, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 10, Եր., ԳԱ հրատ., 1999, էջ 42:

²⁴ Խօսքը վերաբերում է գերմանացի փիլիսոփայ Յոհան Գոտլիբ Ֆիխտէին, որը գերման ժողովրդին խանդավառեց զայնչ Նապոլէոնի դէմ համաժողովրդական պայքարի իր յայտնի կոչերով, նպաստեց տարբեր մանրիկ իշխանութիւնների համախմբմանը յանուն միասնական հզօր Գերմանիայի: Գ. Նժդեհը երազանքով ընդգծում է «հայութեան Ֆիխտէի»՝ Ա. Ահարոնեանի դերակատարութիւնը ժողովրդի ազատագրութեան եւ ազգային հրաշունչ մշակոյթի համակարգի ձեւաւորման խնդրում՝ իբրեւ առաջնորդ բառիս բացարձակ իմաստներով, իբրեւ քաղաքական գործիչ, իբրեւ գրական շարժման երեւելի դէմք:

յադրանակի: ...Նա երգեց մեր ցեղին յատուկ Վահե-Վահեան քաջութիւնը, եւ հայ ռազմիկները մշակեցին Արուեստից Արուեստը՝ ժպտադէմ մեռնելու հոգեբանական արուեստը»²⁵:

Չափազանցութիւնը՝ չափազանցութիւն, բայց ընդունենք, որ Աւ. Ահարոնեանի քաղաքական հարուստ կենսագրութիւնը, ի հա՛րկէ, էապէս պիտի ազդէր նաեւ իր գրական ընկալումների յետագծի վրայ, իսկ քաղաքական հակառակորդները առիթը չպիտի բաց թողնէին գրականութեան մէջ նսեմացնելու նրա բացարձակ հեղինակութիւնն ու համբարը՝ «դասակարգային անհանդուրժողութեան» անհաշտ, չարասաց դիրքերից: Այստեղից՝ Գ. Նժդեհի սուր ու նպատակային պաշտպանութիւնը, որն այս դէպքում արդարացուած է:

Ժամանակին ուրիշները եւս նկատել էին խոշոր արձակագրի «հակասոցիալիստական» կեցուածքը՝ այլասիրութեան եւ հայասիրութեան բաւիղներում միշտ դէպի ազգայինի գերապատուութեան մղուելու հակումը (Մկրտիչ Պարսամեան, Միքայէլ Վարանդեան, նաեւ՝ Յակոբ Օշական): Այդ ելակէտով էր նա չափում ինչպէս իր ընդհանուր ստեղծագործութիւնը, այնպէս էլ քաղաքական բուն գործունէութիւնը: Աւելացնենք այն, ինչը բխում է գրականութեան զարգացման ազգային իւրայատկութիւնից. Սփիւռքի գրական ընթացքի համար այս դրոյթը մնաց ճնշող, գերիվեր, բայց մասամբ անյադրահարելի երազանք, քանի որ նրա ձեւաւորումն ու զարգացումն ընթացան ազգային-ընկերային սուրսայր պայմաններում, երբ ժողովրդի լինելութեան խնդիրները կլանում էին գեղարուեստական կարգի յղացումները:

Աւ. Ահարոնեանի ստեղծագործական ժառանգութեան գնահատութիւնը մեր օրերում նոր սահման է հատում: Մեզ համար կարեւոր է մօտեցումների մէջ գիտական եւ ոչ գաղափարական մեկնակէտերի վերադարձը: Իսկ այս առումով Աւ. Ահարոնեանի 150 ամեակը վերարժեւորումների նոր ճանապարհի սկիզբ է:

Souren Danielian

SUMMARY

“Aharonian’s Literature Values in Critical View of Eastern Armenian Mind”

Negative approaches to Avedis Aharonian’s literature and political deal come from Eastern Armenian socialistic mind, political and cultural view that reduced national and political dreams and this since 10s years of 20th century. This ideology was the dominant and continued to half of 50s years, until the end of cult of personality, and have many followers, they couldn’t any way,

²⁵ Գ. Նժդեհ, Հատընտիր, Եր., 2000, էջ 142:

in that list many talents, such as Vahan Terian, with his supporters: Tsolak Khanzadian, Poghos Makintsians and others.

In this article we try to show the ground of this political and cultural attitude and to see the prose writer's returning way to Eastern Armenian reader.

Key words and phrases: Avedis Aharonian and Vahan Terian, Eastern Armenian literature, prose writer, political life, Eastern Armenian aesthetic opinions, crying and fighting moods.

Բանալի բառեր եւ բառակապակցութիւններ – Աւետիս Ահարոնեան եւ Վահան Տէրեան, արեւելահայ գրականութիւն, արձակագիր, քաղաքական գործունէութիւն, արեւելահայ գեղագիտական մոտեցումներ, լացի եւ պայքարի տրամադրութիւններ: